Закрытое акционерное общество
«Газпром Армения»
(ЗАО «Газпром Армения»)

Тбилисское шоссе, 43, Ереван, Республика Армения, 0091
тел.: (374 10) 294-728, 294-933, факс: (374 10) 294-728
e-mail: inbox@gazpromarmenia.am, gazpromarmenia.am

«Գազպրոմ Արմենիա»
փակ բաժնետիրական ընկերություն
(«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ)

0091, ՀՀ, Երևան, Թբիլիսյան խճուղի 43
հեռ.՝ (374 10) 294-728, 294-933, ֆաքս՝ (374 10) 294-728
էլ.փոստ՝ inbox@gazpromarmenia.am, gazpromarmenia.am

«16» 01 2019 г. № 40 / 153

16.01.2019թ.

«Իրազեկ Քաղաքացիների Միավորում» Խորհրդատվական ՀԿ
Լրագրող Կարինե Կիրակոսյանին

Ի պատասխան Ձեր 10.01.2019թ. ելից՝ №Հ-1699 գրավոր Դիմումին տեղեկացնում ենք, որ՝ հաշվի առնելով ՀՀ առաքվող բնական գազի գնի փոփոխությամբ պայմանավորված նեղ մասնագիտական ուսումնասիրություններ անցկացնելու անհրաժեշտությունը, կողմերի դիրքորոշումները հստակեցնելու նպատակով ներկայումս նախնական աշխատանքային քննարկումներ են անցկացվում Էներգետիկայի բնագավառում ՀՀ կառավարության լիազորած մարմնի, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի համապատասխան մասնագետների մասնակցությամբ:

Նշված նախնական աշխատանքային քննարկումների արդյունքում կողմերի դիրքորոշումները հստակեցնելուց հետո՝ Ընկերության, որպես բնական գազ մատակարարող կազմակերպության կողմից սպառողներին վաճառվող բնական գազի սակագների կառուցվածքում ներառվելիք Ընկերության սակագնային մարժայի (ներառյալ դրա հաշվարկի համար անհրաժեշտ ցուցանիշների) մեծության վերաբերյալ վերջնական որոշումներ կայացնելու նպատակով նախատեսվում են քննարկումներ (բանակցություններ), որոնցպետք է մասնակցեն նաև շահագրգիռ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և համապատասխան մասնագետներ:

Քննարկումներին (բանակցություններին) Ընկերության միջնորդությամբ կհրավիրվեն Ձեր կազմակերպության

ներկայացուցիչները (հարկ ենք համարում տեղեկացնել նաև, որ որևէ հասարակական կազմակերպություն կամ համապատասխան մասնագետ վերը նշված քննարկումներին մասնակցելու ցանկություն առ այսօր չի հայտնել):

Հասարակայնության և ԶԼՄ-ների հետ կապերի ծառայություն
Հեռ.՝ (374 10) 29 49 36, 29 47 60
Էլ.փոստ՝ m.harutyunyan@gazpromarmenia.am